## ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻՒ

*Օր. Կոընիլիա Պըթէվէզիատիսի*

Տէ՛ր իմ Յիսուս, երբ իջնելով դու երկնից՝
Խորհրդաւոր ինչպէս մայիս կենսաբեր՝
Ոտ դրեցիր հովտիս վրայ փշալից,
Բացուեցան շուրջդ իսկոյն շուշան ու վարդեր։

Երբ հնչեցին, Տէ՛ր իմ, ողբի քո ձայներ՝
Թռչնակների երգի նման քաղցրալուր,
Երկնից իջան ոսկեփետուր հրեշտակներ՝
Գեղգեղել քեզ իրանց օրօ՛րը մաքուր։

Եւ երբ ցոլաց Յորդանանում վեհ պատկերդ՝
Նշոյլներով ոսկեճաճանչ պսակի՝
Լռե՛ց շառաչն, յորձանքները դարձան ետ,
Պատկառեցան կոհակ, փրփուր մի առ մի։

Նոր յունարէնից թարգմ. Մ. Վ. Մ.